


Փաստ. անվանումը	ԵՄՀ Նախապատրաստական բաժնում օտարերկրացիների ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-42-01
Հաստատման ամսաթիվը	30 08 2017
Արձանագրության N	6-17
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Նախապատրաստական բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Նախապատրաստական բաժնի ղեկավար



Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետ ԵՄՀ) նախապատրաստական բաժնի գործունեության նպատակն է համալսարանի համապատասխան մասնագիտությունների ընդունելության կարգով նախատեսված քննական առարկաների և ուսուցման լեզվին չտիրապետող օտարերկրացիների նախապատրաստումը, ինչպես նաև ուսուցումը շարունակելու համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

1. Նախապատրաստական բաժնում դասավանդվում են ուսումնառության լեզուն և մասնագիտական առարկաների հիմունքները, որոնք նախապայման են հանդիսանում տվյալ մասնագիտության ընդունելության քննությունները հանձնելու համար:
2. Նախապատրաստական բաժին ընդունվող օտարերկրացիները ներկայացնում են «Օտարերկրացիների փաստաթղթերի հավաքագրման և կացության քարտ ձեռք բերելու» ընթացակարգով նշված փաստաթղթերը և դիմում՝ ԵՄՀ ռեկտորի անունով:
3. Նախապատրաստական բաժնում ուսանողների համար կազմակերպվում են երկարաժամկետ (ութամսյա) և արագացված (վեցամսյա) դասընթացներ:
4. Ութամսյա նախապատրաստական դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուստարվա նոյեմբեր-հուլիս, իսկ արագացված դասընթացները՝ հունվար-հուլիս ամիսների ընթացքում:
5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար նախապատրաստական դասընթացներում սովորողի ուսման վարձի չափը սահմանվում է ԵՄՀ գիտական խորհրդի կողմից:
6. Նախապատրաստական բաժնի ուսանողների գիտելիքի նախնական մակարդակին համապատասխան խմբեր ձևավորելու նպատակով անցվերեն առարկայից անցկացնում է թեստավորում (նախաստուգում):
7. Նախապատրաստական բաժնում ուսուցումն իրականացվում է դասախոսությունների, երկխոսությունների, դերախաղերի, ինքնուրույն և գործնական աշխատանքների ու խորհրդատվությունների ձևով:
8. Ուսումնական գործընթացում ուսանողների գիտելիքները վերահսկելու նպատակով կիրառվում են ընթացիկ ստուգումներ ուսման ընթացքում և ավարտական քննություններ:
9. Նախապատրաստական կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած ուսանողներին տրվում է սահմանված նմուշի վկայական:
10. Ուսանողների գիտելիքի մակարդակը որոշվում է 20 միավորանոց համակարգով:
11. Նախապատրաստական դասընթացներից հեռացված ուսանողը, համաձայն «ՀՀ քարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի», չի կարող կրկին վերականգնվել նույն բաժնում:
12. Նախապատրաստական բաժնից տեղափոխություն այլ բուհի նախապատրաստական բաժին չի թույլատվում:

13. Նախապատրաստական բաժնում ծրագիրը ավարտվում է ավարտական քննություններով՝ մասնագիտության ընդունելության քննություններով նախատեսված առարկաներից: Նախապատրաստական դասընթացի ավարտական քննությունների վերահանձնում չի թույլատրվում՝ բացառությամբ՝ հիվանդության պատճառով քննությանը չներկայանալու դեպքերի՝ համապատասխան տեղեկանքի առկայության դեպքում:
14. Նախապատրաստական բաժնի ավարտական քննությունները հանդիսանում են ընդունելության քննություններ ակադեմիական տարվա առաջին կուրսի համար:
15. ԵՄՀ և նախապատրաստական բաժնում ուսանող հարաբերությունները կարգավորվում են կրթական ծառայությունների մատուցման պայմանագրով:
16. Նախապատրաստական բաժնի դասընթացների ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու նպատակով ստեղծվում է մասնկավարժական խորհուրդ, որը հաստատվում է ԵՄՀ ռեկտորի կողմից:
17. Կրթական գործընթացի մասնակիցները պարտավոր են պահպանել սույն կանոնակարգը, ինչպես նաև ԵՄՀ-ի հետ կնքված պայմանագրային պարտավորությունները: